ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1917—1920 ԹԹ.[1]

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Փետրվարյան ռևոլյուցիան չլուծեց ագրարային-գյուղացիական հարցը։ 1917 թվականի մարտին ստեղծված Անդրկովկասյան հատուկ կոմիտեն ապրիլի 12-ի իր կառավարական հայտարարությամբ երկրամասի բնակչությանը զգուշացնում էր, որ ագրարային հարցի լուծումը հետաձգվում է Սահմանադիր ժողովի գումարմանը և անթույլատրելի է համարվում «ուրիշի սեփականության բռնագրավումը, արքունական թե կալվածատիրական անտառների կտրատումը և բոլոր տեսակի բռնությունները ու ինքնակամ գործողությունները», և պահանջում է առաջվա նման ժամանակին վճարել բոլոր հին «հարկերն ու տուրքերը»[2]։

Աշխատավոր գյուղացին կրկին մնաց ենթակա նախկին չինովնիկների ու պաշտոնյաների կամայականություններին, որովհետև Փետրվարյան ռևոլյուցիայից հետո նրանք հիմնականում շարունակեցին մնալ իշխանության տեղական օրգաններում։ Այդ տեսակետից դրությունը փաստորեն չփոխեց Հատուկ կոմիտեի կողմից 1917 թ. ապրիլի 24-ին ընդունված «Անդրկովկասի սահմաններում տեղական իշխանություն կազմակերպելու մասին» օրենքը, որի համաձայն պետք է ընտրվեին այսպես կոչված գյուղական գործադիր կոմիտեներ։ Իրականում ոչ մի ընտրություն տեղի չունեցավ։ Կալվածատերերը, կուլակներն ու գյուղական հարուստները՝ գործակցած նախկին պաշտոնյաների հետ, օգտագործելով իրենց նյութական նպաստավոր դրությունը, գրեթե ամենուրեք բուն գրեցին իշխանության տեղական օրգաններում։ Պետական ու պարտիական արխիվներում, ինչպես նաև ժամանակի պարբերական մամուլում պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ, որոնք ակնառու վկայում են «ընտրությունների» կեղծ-դեմոկրատական բնույթը, դրանց զավեշտական պատկերը։ Ուշագրավ է, օրինակ, Երևանի գործադիր կոմիտեին ուղղված մի զեկուցագիր, ուր հայտնվում էր, թե Երևանի նահանգի դրությունը ցարի տապալումից հետո ոչնչով չի փոխվել, որ գյուղական ավագները ոչ թե ընտրյալներ են, այլ պրիստավների ու հաշտարար դատավորների դրածոներ, որոնց «հասարակությունը ատում է մահից ավելի»[3]։ Իսկ Գանձասարից գրում էին, որ «շրջանի գյուղական և հասարակական գործադիր կոմիտեներում ընտրվում են միայն ոստիկաններն ու կուլակները... երեկվա կաշառակերը, ցեցը, կուլակը և ավագը այսօր ոչ միայն գործադիր կոմիտեի անդամ է, այլև կոմիսար (մի օրվա ընթացքում միապետականից դարձավ ռևոլյուցիոներ)»[4]։ Ընտրախաղի նույն պատկերն էր նկարագրում Մեծ Ղարաքիլիսայից «Кавказский рабочий» *թերթին ուղարկված մի թղթակցություն, որը զետեղված է թերթի 160-րդ համարում։ Այս թղթակցությունը նույնպես վկայում է, որ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո գյուղական պաշտոններում մնացել էին առևտրականները, խանութպանները, հարուստները, դարբաններն ու*

---

[1] *Այս հոդվածում մենք նպատակ ենք դրել համառոտակի լուսաբանել հողային հարցը և գյուղացիության դրությունը Հայաստանում 1917—1920 թվականներին, այսինքն ցույց տալ այն հիմքը, որի վրա այդ տարիներին ծագել ու ծավալվել են գյուղացիական զանգվածների ընդվզումներն ու պայքարը։ Սակայն վերջին հարցին մենք այստեղ չենք անդրադառնում, ռանի որ, ինչպես նշեցինք, մեր նպատակը առայժմ գյուղացիության վիճակի ուսումնասիրությունն է։*

[2] *Վրաց. ՍՍՌ Հոկ. ռևոլյուցիայի ԿՊԱ, ֆ. 41, գ. 122, թ. 1։*

[3] *ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 517, թ. 13։*

[4] *Նույն տեղում։*

կոլակները։ Հոդվածագիրը փաստարկելով այդ, այնուհետև փորձում է բացատրել, թե ինչու «ընտրությունները» այդպիսի արդյունքներ են տվել։ Այդ բացատրություններր ցույց են տալիս, որ շրջանի գյուղերում ընտրություն իրականում տեղի չի ունեցել։ Թղթակիցը հայտնում է, որ «ընտրությունները» կատարվել են այնպիսի օրերին, երբ զբաղված լինելով դաշտային աշխատանքներով՝ գյուղացիները չեն կարողացել մասնակցել «ընտրական» ժողովներին։ Իսկ լիազորները ուշադրություն անգամ չեն դարձրել այդ հանգամանքին, «որովհետև նահանգական ու գավառային լիազորներին Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կողմից կարգադրված է եղել, որպեսզի նրանք շտապեն, արագ ավարտեն ընտրությունները։ Եվ ինչ,— հայտնում էր թղթակիցը,— միայն մի ղեկավար (լիազոր— Վ. Մ.) մի օրվա ընթացքում ընտրություններ է անցկացրել 5—6 գյուղերում՝ 9—10 դատարկապորտ և ապահովված «քաղաքացիների» մասնակցությամբ՝ յուրաքանչյուր գյուղում միջինը 200—300 ընտրողի փոխարեն»[1]։

«Ընտրությունների» նմանօրինակ անցկացմանը, իհարկե, անգիտակ չէր Հատուկ կոմիտեն։ Ավելին, այդ դեմոկրատախաղը տեղի է ունենում նրա անմիջական հրահանգի հիման վրա, հրահանգ, որը ոտնակոխ էր անում գյուղերում գործադիր կոմիտեներ ընտրելու վերաբերյալ նույնիսկ ապրիլի 24-ին ընդունված կիսատ-պռատ օրենքը։ Այդ հրահանգը «ընտրություն» օրինական էր համարում, եթե գյուղական համայնքի ժողովին (որը և իրավասու էր ընտրելու գործադիր կոմիտե) մասնակցել էր ընտրողների 15 տոկոսը[2]։

Ամրապնդելով շահագործողների քաղաքական դիրքերը, ժամանակավոր կառավարությունը, ինչպես և նրա կամակատար Անդրկովկասյան հատուկ կոմիտեն չէին մոռանում հոգ տանել նաև նրանց տնտեսական տիրապետությունը անխախտ պահպանելու մասին։ Հողի և գյուղացիական այլևայլ հարցերի վերաբերյալ նրանց ընդունած բոլոր օրենքների, որոշումների և հրահանգների էությունը եղել է գյուղացիական ելույթների խափանումն ու կալվածատերերի և կուլակների հողասեփականության պահպանումը։ 1917 թ. մարտի 26-ին Անդրկովկասյան հատուկ կոմիտեն գյուղացիական ելույթների ճնշման տակ ստեղծում է Հողային գործերի ժամանակավոր հանձնաժողով՝ «պարտավորեցնելով» նրան «ճորտատիրական իրավունքի մնացուկների վերացման նախապատրաստումը և հենց դրանց վերացման համար միջոցառումների ընդունումը»։ Սա գյուղացիական մասսաներին խաբելու այն քայլերից էր, որոնց, ինչպես կտեսնենք ստորև, դիմում էին ժամանակավոր կառավարությունն ու Հատուկ կոմիտեն, կանգնելով ագրարային շարժումների պատնեշին դեմ-հանդիման։ Եվ իրոք, այդ հանձնաժողովը, ինչպես և հունիսին ստեղծված Հողային կոմիտեն, գյուղացիությանը ոչինչ չտվին՝ բացի նախազգուշացումներից և ահաբեկումներից։

Ճորտատիրության մնացուկների վերացման մասին մարտի 26-ին դեմագոգիա բարձրացնող Հատուկ կոմիտեն մեկ ամիս անց՝ ապրիլի 23-ին, հրահանգ է ընդունում ագրարային շարժումների դեմ, շարժումներ, որոնց նպատակը օբյեկտիվորեն ճորտատիրական այդ մնացուկների հիմքի՝ կալվածատիրական հողատիրության վերացումն էր։ Հատուկ կոմիտեն կառավարական այդ հրահանգով արգելում է ագրարային ելույթները, երկրամասի գյուղացիությունից պահանջելով դադարեցնել կալվածատիրական հողերի բռնագրավումները։ Հրահանգը անթույլատրելի էր համարում «շահագրգռված բնակչության կողմից... Հողային հարցի ինքնակամ լուծումը» և նախազգուշացնում, որ կալվածատիրական հողերի ամեն մի բռնագրավում պատժվելու է «օրենքի ամբողջ ուժով»[3]։

Հողային հարցի լուծումը հրահանգը թողնում էր Սահմանադիր ժողովի դումարմանը։ Սահմանադիր ժողովին սպասելու պատրվակը ժամանակավոր կառավարության և Հատուկ կոմիտեի կողմից օգտագործվում էր աշխատավոր մասսաներին հուզող հարցերի լուծումը ձգձգելու, վերջիններիս ռևոլյուցիոն պայքարը խափանելու համար։

Հավասարապես այդպես էր «լուծում» հողային հարցը նաև Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կողմից հունիսի 21-ին ընդունված «Անդրկովկասյան երկրամասում երկրային և տեղական հողային կոմիտեների մասին կանոնադրությունը»։ Կանոնադրության մեջ շարադրված խնդիրներից իսկ երևում է, որ ստեղծվող երկրային հողային կոմիտեն ի վիճակի չէր շոշափելի փոփոխություն մտցնելու սակավահող և հողազուրկ գյուղացիների դրության մեջ։ Եվ ահա թե ինչու։ Ագրարային հարցում հիմնականը այն է, թե իշխանության այս կամ այն օրգանը հողային ինչ հարաբերությունների, այսինքն հողային սեփականության ինչ ձևի պահպանման

---

[1] «Кавказский рабочий», 1917, № 160:

[2] Նույն տեղում։

[3] Վրաց. ՍՍՌ Հոկ. ռևոլյուցիայի ԿՊԱ, ֆ. 1472, գ. 315, թ. 1։

կողմնակից է։ Այդ տեսակետից մոտենալով հարցին՝ պետք է ընդգծել, որ հիշյալ կանոնադրությունը, չնայած նրանում նշված խոստումներին, ակնարկ անգամ չէր անում կալվածատիրական հողատիրության վերացման մասին։ Կանոնադրության 15-րդ հոդվածը հողային հարցի լուծումը դարձյալ հետաձգում էր Սահմանադիր ժողովին, իսկ Երկրային հողային կոմիտեի պարտականությունն էր համարում վերահսկողության ֆունկցիայի իրականացումը՝ հիմնարկներին և առանձին անձանց պատկանող պետական հողերի օգտագործման նկատմամբ, ինչպես և այն հողերի նկատմամբ, որոնք ժողովրդա-տնտեսական նկատառումներով պիտի վերցվեին հողատերերի ձեռքից կամ վերջիններիս կողմից կամովին կհանձնվեին «պետության տրամադրության տակ»[1]։ Թե որոնք էին «ժողովրդա-տնտեսական նկատառումները», հայտնի չէր։ Նույնքան անորոշ էր նաև, թե այդ «նկատառումները» որ հողատերերի նկատմամբ էին կիրառելի և որոնց՝ ոչ։ Մշուշապատ այս նախադասությունը, սակայն, կարիք չունի տարբեր մեկնաբանությունների, որովհետև այնտեղ ոչ մի խոսք չկար հողի կալվածատիրական սեփականության վերացման մասին։

Ավելի զավեշտական էր և նույնքան էլ անմիտ նախադասության երկրորդ մասը, որով Հատուկ կոմիտեն «կարծում էր», թե կգտնվեն մասնավոր հողատերեր, որոնք իրենց հողերը կամովին կդնեն պետության տրամադրության տակ։ Այնուհետև, հողային կոմիտեների խնդիրն էր ոչ թե ճորտատիրական մնացուկների վերացումը, այլ դրանց «վերացման նախապատրաստումը»[2]։ Մի խոստում, որ մասսաներին մոլորեցնելու համար իր գոյության սկզբից ևեթ Հատուկ կոմիտեն չէր զլանում տալ։

Վերևից ստեղծվող հողային կոմիտեները ըստ էության կոչված էին պաշտպանելու հողատերերի շահերը։ Դա ավելի բացահայտ երևում է «կանոնադրության» մանավանդ այն մասից, որտեղ թվարկվում են նահանգական և գավառական հողային կոմիտեների պարտականությունները։ Հողային կոմիտեները պարտավոր էին նաև հողային վիճելի հարցերը լուծելու համար կազմակերպել «հաշտարար հանձնաժողովներ»[3]։ Հատուկ կոմիտեի նպատակը պարզից էլ պարզ էր։ Հողային վեճերը տեղի էին ունենում առավելապես հողատերերի և գյուղացիների միջև, և այդ վիճելի հարցերը «հաշտարար հանձնաժողովներով» «լուծելը», իհարկե, լուծում չէր։ Բայց դա ինքնին վկայում է, որ Հատուկ կոմիտեն մտադրություն չուներ վերացնելու կալվածատիրական հողատիրությունը, իսկ վերևից ստեղծվող «հաշտարար հանձնաժողովները», որոնց մեջ մտնում էին կալվածատերերի և բեկերի ներկայացուցիչները, ձգտում էին հաշտեցնել խոշոր հողատիրոջն ու նրա դեմ ծառացած գյուղացիական հողազուրկ և սակավահող զանգվածներին։

1917 թ. հուլիսին ճնշելով Պետրոգրադի բանվորների խաղաղ ցույցը, ժամանակավոր կառավարությունը հարձակման է անցնում նաև հողային հարցը ռևոլյուցիոն ճանապարհով լուծող գյուղացիների վրա։ Հուլիսի 12-ին նա ընդունում է օրենք, որը սպառնում է «օրենքի ամբողջ խստությամբ» հետապնդել ու պատժել ագրարային շարժման մասնակիցներին[4]։

Նույն ահաբեկիչ ոգով երկրամասի բնակչությանն է դիմում Հատուկ կոմիտեն, պահանջելով դադարեցնել մասնատիրական հողերի բռնագրավումները։ Այդ դիմումը հետաքրքրական է նրանով, որ այն բովանդակում էր կառավարական խոստովանություն՝ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո երկրամասում ծայր առած ագրարային-գյուղացիական ելույթների լայն թափի մասին[5]։ Գյուղացիական ելույթները ճնշելու նպատակով Հատուկ կոմիտեն, բացի ահաբեկումներից, դիմում էր նաև զինված ուժի օգնության։ Երևանի նահանգում «խաղաղություն պահպանելու» (իմա՝ ռևոլյուցիոն շարժումները ճնշելու) համար Հատուկ կոմիտեն այնտեղ պահում էր պատժիչ զորամաս, որի հրամանատարն էր փոխգնդապետ Վոլնիցկին[6]։

Խոշոր հողատերերի և գյուղացիական զանգվածների միջև հարաբերությունները երկրամասում, այդ թվում նաև Հայաստանում, սրվել էին նաև բահրան վճարելու կապակցությամբ։ Բահրան, խոշոր մասնատիրական հողատիրության հետ կապված ճորտատիրական այդ մնացուկը, Փետրվարյան ռևոլյուցիայից հետո էլ շարունակվում էր պահպանվել նախկին չափերով։ Տառացիորեն այդ էր խոստովանում, օրինակ, Հատուկ կոմիտեի լիազորը Բորչալուի գավառից

---

[1] Վրաց. ՍՍՌ Հոկ. ռևոլյուցիայի ԿՊԱ, ֆ. 1471, գ. 599, թ. 9—12։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, գ. 594, թ. 12—13։

[4] Նույն տեղում, դ. 587, թ. 246։

[5] Նույն տեղում, ֆ. 41, գ. 122։

[6] Նույն տեղում, ֆ. 1472, գ. 382, թ. 90։

ուղարկած զեկուցագրում։ «Նկատի ունենալով,— գրում էր նա,— որ գյուղացիների ու կալվածատերերի՝ ի դեմս նրանց կառավարիչների, միջև հարաբերությունը սպառնալից բնույթ է ընդունում բերքի 1/4—1/3-ը բահրա ստանալու կապակցությամբ, մի վճար, որը ճորտատիրական մնացորդ է և որը... վեր է գյուղացիության ուժերից, խնդրում եմ կիրառեք արտակարգ միջոցներ... որպեսզի խուսափվի այն, երբեմն արյունալի ընդհարումներից, որոնք սակավ չեն ոչ միայն Բորչալուի գավառում, այլև ամբողջ Անդրկովկասում» [1]։

Ինչ էր հետևում Հողատերերի պաշտպանի այս խոստովանությունից։ Առաջինը այն, որ կալվածատերերի և գյուղացիների միջև գոյություն ունեին սուր հակասություններ, որոնց հիմքը տնտեսական էր (կալվածատիրական հողատիրության պահպանումը և դրանից հետևող կապալային ու կիսաճորտատիրական բոլոր պայմանները)։ Երկրորդ, որ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո էլ բահրան նախկինի նման մնում էր իրեն ծանր մի բեռ գյուղացիության վզին և երրորդ, որ արյունալի ընդհարումները (իմա՝ գյուղացիական զինված ելույթները) հաճախակի էին ոչ միայն Բորչալուի գավառում, այլև ամբողջ Անդրկովկասում։ Վերջին հանդամանքը, որ ընդգծեցինք, պատահական չէր։ Տնտեսական ծանր պայմանները, հողային հին, կիսաֆեոդալական հարաբերությունները պահպանվել էին Անդրկովկասի բոլոր շրջաններում, և տնտեսական ծանր վիճակի այդ ընդհանրությունն էլ առաջ էր բերել ընդհանուր մի շարժում, որը անսքող խոստովանում էր նույնիսկ կառավարության պաշտոնատար անձը։

Բնամթերային վճարումներից գյուղացիների հրաժարվելու կապակցությամբ Հատուկ կոմիտեն դիմում է խորամանկ քայլի, օգոստոսի 29-ին ընդունելով օրենք բնամթերային վարձավճարը դրամականով փոխարինելու մասին։ Այդ որոշման համաձայն գյուղացին հողատիրոջը պետք է տար բերքի 1/4-ի փոխարեն՝ 1/5-ը, իսկ 1/5-ի փոխարեն՝ 1/6-ը և այլն, բայց «մեկ տասնորդականից ոչ ցածր» [2]։ Այս որոշումը չէր կարող քիչ թե շատ շոշափելի փոփոխություն մտցնել գյուղացու տնտեսական վիճակի մեջ, որովհետև՝ 1) վարձավճարի այդպիսի «իջեցումը» չնչին արժեք ուներ աղքատ ու սակավահող գյուղացու համար և 2) բնամթերային վճարումների փոխարինումը դրամականով ուներ սոսկ ձևական նշանակություն, քանի որ կալվածատիրոջ հասանելիք մթերքները դրամի էին վերածվելու նահանգական կոմիտեների որոշմամբ, իսկ այդ կոմիտեներում նստած էին հողատերերն ու նրանց պաշտպանները։

Այսպիսով, Փետրվարյան ռևոլյուցիայից հետո էլ հողային հարցը չլուծվեց, և ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը շարունակեց մնալ սակավահողության և հողազրկության ճիրաններում՝ կալվածատիրական բռնություններին ենթակա։ Անդրկովկասում դրությունը չփոխվեց նաև Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո, երբ մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները երկրամասն անջատեցին Սովետական Ռուսաստանից, աշխատավոր մասսաներին զրկելով տեղում մեծ ռևոլյուցիայի նվաճումների, այդ թվում նաև լենինյան հողային դեկրետի իրականացման հնարավորությունից։

Սակայն, չնայած գործադրվող ռեպրեսիաներին, ագրարային շարժումը մասնավորապես 1917 թ. հոկտեմբեր—նոյեմբեր ամիսներին ընդգրկում է Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի, շատ շրջաններ։ Շարժումը մասնավորապես ուժեղ էր Ելիզավետպոլի և Բորչալուի գավառներում, ինչպես նաև Երևանի նահանգի մի շարք գյուղերում։ Այդ առիթով էլ Անդրկովկասյան կոմիսարիատը 1917 թ. դեկտեմբերի 16-ին ստիպված է ընդունում է «Կանոնադրություն արքունական, նախկին ուդելային, եկեղեցական, վանքապատկան, իրավական անձանց և խոշոր մասնատիրական հողերը հողային կոմիտեներին հանձնելու մասին»։ Դեկտեմբերի 8-ին, այդ օրենքի նախագիծը քննարկելիս, մինիստր Շ. Վ. Ալեքսեև-Մեսխիևը, հակաճառելով Խ. Բ. Խան-Մահմեդովին, ասաց, որ կոմիսարիատը ստիպված է ընդունել նման կանոնադրություն։ «Մենք կարծում ենք,— ասաց նա,— որ եթե չձևակերպենք այդ բայը, ագրարային շարժումը կհասցնի աղետների» [3]։

Կանոնադրությունը, ինչպես և պետք էր սպասել, չլուծեց հողային հարցը։ Պահպանելով հողի մասնավոր սեփականությունը, կանոնադրությունը կալվածատիրական հողերի բռնագրավումը կրկին թողնում էր Սահմանադիր ժողովին։ Եթե ընդունենք, որ կատարվելու էր որոշ հողերի բռնագրավում (որպիսին չկատարվեց), ապա այդ հողերը կանցնեին ոչ թե գյուղացիական ռևոլյուցիոն կոմիտեներին, այլ անցյալ դարի 60-ական թվականների նման կալվածատիրական կոմիտեների ձեռքը։ Կանոնադրությունը ոչինչ չէր ասում, թե ինչպիսի և ինչ հողեր պետք

[1] Վրաց. ՍՍՌ Հոկ. ռևոլյուցիայի ԿՊԱ, գ. 122։

[2] Նույն տեղում, ֆ. 56, ցուցակ 6, գ. 1142, թ. 3—4։

[3] Նույն տեղում, ֆ. 41c, գ. 141, թ. 135։

է բռնագրավվեն հողատերերից։ Մերկացնելով այդ օրենքի հակագյուղացիական բնույթը, Ստ. Շահումյանը գրում էր. «... այդ օրենքով կալվածատիրական հողատիրությունն այս կամ այն պատրվակով այնուամենայնիվ պահպանվում է, իսկ մնացյալ հողերը հանձնվում են ոչ թե գյուղացիական կոմիտեների, այլ ինչ-որ վերևից նշանակված՝ հողային կոմիտեների տնօրինությանը։ Դուրս է գալիս, որ հողային, այսինքն գյուղացիական հարցի լուծումը կատարում են ոչ թե իրենք գյուղացիները, ինչպես այդ պետք էր սպասել, այլ ինչ-որ ուրիշ կազմակերպություններ, ինչպես այդ տեղի ուներ հողատիրական իրավունքների վերացման ժամանակ, երբ գյուղացիների բախտը որոշում էին ոչ թե գյուղացիական, այլ ազնվականական կոմիտեները, այսինքն, ուրիշ խոսքով ասած՝ հողատերերն ու ստրկատերերը»[1]։

Շուտով, կանոնադրությունն ընդունելուց մի քանի օր հետո, առավել պարզվում է, որ այդ օրենքը նույնիսկ իր կալվածատիրական բնույթով հանդերձ, աչքակապություն էր։ Դեկտեմբերի վերջերին Անդրկովկասյան կոմիսարիատը, ընդառաջ դնալով կալվածատերերի շահերին, ընդունում է մի որոշում, որը գյուղացիներին պարտավորեցնում էր իրենց տերերին վճարել վարձակալական և բոլոր այլ տեսակի վճարումները, տուրքերն ու պարտքերը, այն էլ 1916 թվականի հողատիրական գրույքներով։

Գյուղացիության տնտեսական պայմանները ավելի էին ծանրանում Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից պարբերաբար կազմակերպվող բռնագրավումների պատճառով։ Այսպես, Երևանի նահանգի գյուղերում 1917 թ. վերջին ամիսներին և 1918 թ. հունվարին կոմիսարիատը դաշնակցական պաշտոնյաների միջոցով անցկացնում է բրնձի ու ձիերի բռնագրավման կամպանիա։ Բրնձի պաշարները գյուղացիներից վերցնելու համար հրամայվում է գյուղերում փակել դինգերը[2], իսկ գեներալ Միլիկովը հրաման է արձակում ձիերը թաքցնողներին երեք ամսով բանտարկել և ձիերը բռնագրավել։ Սակայն գյուղացիները մասսայաբար հրաժարվում են իշխանության լիազորներին բրինձ և ձիեր տրամադրել։

1918 թվականի մարտի 7-ին, ի լրացումն 1917 թ. դեկտեմբերի 16-ի կանոնադրության, Անդրկովկասյան Սեյմը ընդունում է օրենք «Հողատերերին թողնվող հողի չափը որոշելու և հողային ռեֆորմ իրականացնելու միջոցառումների մասին»։ «Օրենքով» իբր թե բոլոր մասնատիրական հողերը, բացառությամբ 2-րդ հոդվածում նշված տարածությունների, պետք է կազմեին հողային մի ֆոնդ, որը գտնվելու էր երկրային և նահանգական կոմիտեների տրամադրության տակ։ 2-րդ հոդվածը նախատեսում էր ըստ խմբերի հողատերերին թողնել հողեր հետևյալ չափերով. ա) 7 դեսյատին, եթե հողերը գտնվում են տնտեսական արժեքավոր կուլտուրաների շրջանում, բ) 15 դեսյատին՝ հացահատիկային և գ) 40 դեսյատին՝ առավելապես անասնապահական շրջաններում[3]։

Նախ նշենք, որ «օրենքն» ընդունելուց հետո իր երկու և կես ամսյա գոյության ընթացքում Սեյմը գործնական ոչ մի քայլ չարեց այն իրականացնելու համար, թեև նրա կենսագործումն էլ էական բարելավում չէր մտցնի գյուղացու ծանր վիճակում։ «Օրենքում» խոսք անգամ չկար հողի մասնավոր սեփականության վերացման մասին, իսկ բռնագրավվելիք հողերը հանձնվելու էին ոչ թե սակավահող և հողազուրկ գյուղացիներին, այլ Սեյմի նշանակած «գործին հմուտ» և «իրազեկ» բուրժուա-կալվածատիրական հողային կոմիտեներին, որոնք տնօրինելու էին դրանք։ Մյուս կողմից, օրենքի 2-րդ հոդվածն ու դրան կից ծանոթությունը լայն սողանցք էին թողնում հողային կոմիտեներին՝ բոլոր տեսակի մեքենայությունների համար և հնարավորություն՝ «օրինականորեն» պաշտպանելու հողատերերի շահերը։ Կոմիտեները, օրինակ, հնարավորություն ունեին «ա» խմբի շրջանները ներկայացնել իբրև «բ» կամ «գ» և համապատասխանաբար ավելացնել հողատիրոջը թողնվելիք հողերի քանակը։ Բացի դրանից, 2-րդ հոդվածի ծանոթությունը հողային կոմիտեներին իրավունք էր վերապահում «նայած տեղական պայմաններին» ավելացնել հողատերերին թողնվող հողերի քանակը, ընդ որում «ա» խմբի շրջաններում կարելի էր ավելացնել 10 դեսյատին ևս, «բ» խմբում՝ 20 և «գ» խմբի շրջաններում՝ 50 դեսյատին[4]։ Այս նշանակում էր, որ նույնիսկ «օրենքի» իրագործման դեպքում նախկին հողատերերը չէին կորցնելու իրենց տնտեսական գերիշխող դիրքերը և շարունակելու էին գյուղացիական մասսաների շահագործումը։

---

[1] Ս. Գ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 532։

[2] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 39/103, գ. 108, թ. 10։

[3] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրաց. ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 236, թ. 138—139։

[4] Նույն տեղում։

***

Պայքարելով ռևոլյուցիոն մասսաների դեմ և երկրամասն անջատելով Սովետական Ռուսաստանից, Անդրկովկասյան կոմիսարիատն ու Սեյմը գործնական պայքար չկազմակերպեցին թուրքական օկուպանտների դեմ, որոնք առաջ շարժվելով՝ անխնա կոտորում էին հայ ազգաբնակչությանը։ Թուրքական օկուպացիայի հետևանքով քայքայվեց Հայաստանի շատ շրջանների գյուղատնտեսությունը, թուրքական յաթաղանի զոհը դարձան տասնյակ հազարավոր հայ գեղջուկներ ու գեղջկուհիներ, քաղաքացիներ, բազմահազար հայեր գերեվարվեցին և քշվեցին Թուրքիայի խորքերը՝ սաժանակիր աշխատանքի։ Արդահանում, օրինակ, թուրքերի կատարած գազանությունների մասին «Մշակը» գրում էր. «Գեղեցիկ կանանց տանում էին թուրք պարապլուխների մոտ։ Մունետիկը կոչ էր անում թաքնվածներին դուրս գալ թաքստոցներից։ Դուրս եկան 35 մարդ, որոնց իսկույն սրախողխող արին։ Առաջին օրը կարողացան թաղել 700 մարդ, որոնց դիակները հավաքեցին փողոցներից։ Սպանվածների ընդհանուր թիվը հասնում է 2000-ի»[1]։ Թուրքական օկուպանտների հայաջինջ գործողությունները հրեշավոր կերպարանք էին ընդունել։ Զրավարարված 1915 թվականին կատարած ջարդով, նրանք այժմ որոշել էին վերջնական հաշիվ տեսնել կենդանի մնացած հայերի հետ։ «Թուրքերի վերադարձը Տրապիզոն նշանավորվել է կոտորածների նոր ակտերով,— հաղորդում էր ֆրանսիական ռադիոն 1918 թ. մարտին։— Ռուսների քաշվելուց հետո հազարավոր մարդիկ գնդակահարվել են կամ այրվել։ Հայերը ենթարկվել են աննկարագրելի տանջանքների, երեխաներին լցրել են պարկերը և ծով են նետել։ Մերերին և կանանց խաչել են և խոշտանգել, բոլոր երիտասարդ աղջիկներին ու երիտասարդ կանանց թուրքերը տարել են»[2]։

Կոտորածն առավել մեծ չափեր ընդունեց Ալեքսանդրոպոլի և Զարաբիլիսայի գավառներում, ուր, բացի տեղացիներից, կուտակվել էր հոկտյական թվով հայ գաղթականություն։ «Ընդհանուր առմամբ Զարաբիլիսայի շրջակայքում գնդակահարված են մի քանի հազար մարդ. բանի ճիշտ թիվը պարզելու հնարավորություն չկա,— կարդում ենք ժամանակի փաստաթղթերից մեկում,— պետք է կարծել, որ այդ թիվը 3000-ից պակաս չէ, թեև ոմանք հաստնում էին 7000-ի։ (Այս թվի մեջ չեն մտնում սպանված տեղացիները՝ թվով 1470 հոգի)... Լուսանկարները միանգամայն պարզում են, թե ինչ ձևով են կատարվել սպանությունները— բոլոր զոհերը կապկպված են միմյանց թոկերով... Եղել են դեպքեր, երբ բոլոր տղամարդկանց դուրս են քշել գյուղից և կանանց բռնարարել»[3]։ Այսպիսով երկիրը զրկվում էր աշխատավոր ձեռքերից, մշակելի հողերը դառնում էին խոպան։ Միայն Շիրակի և Փամբակի գյուղերից երզրում քշվեցին 8000 դերիներ[4]։

Հոկտյական էր թուրքական զորքերի հասցրած տնտեսական վնասը։ Թուրքական բանակը, մանավանդ հեծելազորը, տրորում և փչացնում էր նորածիլ արտերը, գրավում և մորթոտում էր անասունները, հրկիզում խոտի դեզերն ու տները։ Միմիայն Փամբակի շրջանի գյուղերից թուրքական օկուպանտները տարան 24.303 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 96,704 գլուխ ոչխար, 4718 ձի, 6296 գութան և արոր, 527.927 փութ ալյուր և այլն[5]։

1918 թվականի մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմը քայքայվեց և ստեղծվեցին Հայաստանում՝ դաշնակցական, Վրաստանում՝ մենշևիկյան և Ադրբեջանում՝ մուսավաթական կառավարությունները։

***

Գալով իշխանության գլուխ, դաշնակցական պարտիան ամբողջությամբ պահպանեց ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան հատուկ կոմիտեի, Անդրկովկասյան կոմիսարիատի ու Սեյմի որոշումները և օրենքները։ «Հայաստանի հանրապետության համար պարտադիր են բոլոր այն օրենքները, որոնք հրատարակված են Ռուսաստանի կառավարության. Անդրկովկասյան կոմիսարիատի և Անդրկովկասյան Սեյմի կողմից»[6],— ասված էր 1918 թ. դեկտեմբերին դաշնակցական խորհրդարանի ընդունած որոշումներից մեկում. Դաշնակցական կառավարությունը պահպանեց ու որդեգրեց մասնավոր հողատիրությունը, պահպան կանգնեց կալվածատերերի շահերին։ «Հողային սեփականությունը սրբություն է, ոչ թե իրավունք

[1] «Մշակ», 1918, № 67։

[2] J. Lepsius, Deutschland und Armenien, Potsdam, 1919, էջ 383։

[3] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 202, գ. 1271, թ. 47։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում, թ. 49—50։

[6] «Զանգ», 1918, № 81։

չունի կալվածատիրոջը դիպչել»[1],— հայտարարում էր դաշնակցական կառավարությունը։ «Քանի դեռ չի մտցված կյանքի մեջ հողերի համայնացման օրենքը,— հրահանգվում էր դաշնակցական Մինիստրների խորհրդի որոշումներից մեկում,— ընդունել կալվածատերերի իրավունքն իրենց հողերի վերաբերմամբ և համաձայնության գալով տերերի ու կապալառուների հետ, վերականգնել կալվածատերերի իրավունքը»[2]։

Եվ մեծ չափով հողային տարածություններ դաշնակների օրոք շարունակեցին մնալ խոշոր հողատերեր Խանագովների, Արամյանցի, Արղությանի, Քալանթարյանների (Լոռում), Մելիք-Աղամալյանների (Կոտայքում), Եղիազարյանների, Ջալալովների, Խան-Մակինսկու (Աշտարակում), Մատուրովների (Ախտալում), Աֆրիկյանների (Նոր Բայազետում) և ուրիշների ձեռքին։

Հայտնի է, որ պաշտոնական տվյալներով ցարիզմի տիրապետության ժամանակ Հայաստանի 600 հազար հեկտար վարելահողերի կեսը պատկանում էր կալվածատերերին, կուլակներին և եկեղեցուն, իսկ նույնքան էլ բաժին էր ընկնում գյուղացիական տնտեսությունների 95 տոկոսը կազմող չքավոր և միջակ տնտեսություններին։ 140 հազար խոտհարքից 100.000 հեկտարը պատկանում էր կալվածատերերին ու պետությանը[3]։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հայաստանում կատարված 343,7 հազ. հեկտար ցանքսից 205,7 հազ. հեկտար, կամ 60 տոկոսը, բաժին էր ընկնում կալվածատերերին, կուլակներին և վանքին, իսկ 153 հազար չքավոր և միջակ տնտեսություններին՝ 138 հազար հեկտար ցանքս, այսինքն ամեն մի տնտեսությանը՝ մեկ հեկտարից էլ պակաս[4]։

Դաշնակները ամբողջությամբ պահպանեցին բուրժուա-կալվածատիրական հողային այս հարաբերությունները։ Ավելին, դաշնակցությունը ստեղծեց խոշոր հողատերերի նոր, յուրահատուկ մի շերտ, որն առաջացավ գյուղացիության լավագույն հողերը բռնագրավելու, մասնավորապես նախկին պետական հողերի վրա ապրող գյուղական համայնքների հողերը կրճատելու և ադրբեջանական մի շարք գյուղերի տեղահանման հաշվին։ Այդ նոր հողատերերը դաշնակցական մինիստրներն էին, պառլամենտի անդամները, տեղական և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ։ Ըստ էության հողատերեր էին դարձել, օրինակ, պառլամենտի անդամներ Հ. Տերտերյանը, Ս. Գրիգորյանը, Վարվառե Սահակյանը, Պերճուհի Բարսեղյանը, Ս. Սաֆարյանը, Լ. Պետրոսյանը, Վ. Նավասարդյանը և ուրիշներ[5]։

Իր հակաաշխատավորական քաղաքականությամբ դաշնակցական կառավարությունը նպաստում էր գյուղում կուլակության տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդմանը։ Հաճախ գյուղացիներից խլվում էին ռևոլյուցիոն ճանապարհով գրաված հողերը և դրանք վերադարձվում իրենց նախկին տերերին՝ կուլակներին ու կալվածատերերին։ Այսպես, 1919 թ. գարնանը Լոռվա Կուրթան և Վարդաբլուր գյուղերի հասարակությունից վերցվեցին և խանագովին տրվեցին գյուղացիների կողմից ինքնակամ կերպով ցանված հողերը։ Այդպես վերականգնվեց նաև Իջևանի անտառապետի իրավունքը «Դանաղան» կոչվող հողամասի վրա, որի պատճառով Աչասու գյուղի հասարակության կեսը զրկվեց հողից[6]։

Դաշնակցության օրոք ավելի արագացավ գյուղացիական գանգվածների ազքատացման և հողազրկման ընթացքը։ Թուրքական ագրեսիայի և դաշնակների հակաժողովրդական քաղաքականության հետևանքով սովի ու աղքատության մատնված գյուղացին հաճախ ստիպված էր լինում ամենաչնչին գներով կուլակին և ունևորներին վաճառել իր ունեցվածքը, ընդհուպ մինչև նորածիլ արտերը։ Դա լայն հնարավորություն էր բացում կուլակների համար իրենց ճանկը գցելու գյուղացիների լավագույն վարելահողերն ու այգիները։ Ահա այդ վկայող մի քանի փաստաթղթեր։ 1919 թ. փետրվարի 3-ին Ճաթղռան գյուղից հայտնում էին, թե սովից «ազատվելու համար գյուղացին շատ չնչին գներով ծախում է տուն, կահկարասին, ապրանքը, հողերը և նույնիսկ նորածիլ արտերը։ Ինչ խոսք, որ անխիղճ կուլակները օգտվում են և ծծում ժողովրդի ամբողջ հարստությունը»[7]։ Նույն թվականի հունիսին Մոլլա-Բայազետ գյուղից

[1] «Լոռվա գյուղացիության ձայնը», 1920, № 2։

[2] Հ. Թումանյան. Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Հայկ. ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1946, № № 11—12։

[3] Նույն տեղում։

[4] Ա. Մարուխյան. Գյուղացիության դրությունը նախասովետական Հայաստանում (1900—1920), Երևան, 1948, էջ 17։

[5] «Առաջին մասսայական ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում» (նյութեր և փաստաթղթեր), Երևան, 1932, էջ 110։

[6] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 203, գ. 600, թ. 20։

[7] «Ջանգ», 1919, № 21։

գրում էին, որ գյուղում եղած 60 խալվար ցորենի ցանքսերից «45 խալվարի կեսը ծախված է։ Գնել են տեղացի կուլակները», իսկ Սարդարարադ գյուղից (այժմ ք. Հոկտեմբերյան — Վ. Մ.) գրում էին, թե գյուղի ընդամենը 150 խալվար ցանքսից «100-ը ծախված է»[1]։ Վաղարշապատի շրջանի Մուղանջուղ գյուղի բնակիչները էջմիածնի համայնական վարչությանը բողոքում էին, որ համագյուղացի կուլակ Նավասարդյանը չնչին գներով վերցրել է իրենց լավագույն հողերն ու այգիները, իրենց զրկելով ապրուստի միջոցներից[2]։ Ապարանի շրջանի Ղազնաֆար գյուղից տեղեկացնում էին, որ գյուղի կուլակները 1919 թ. բռնի կերպով ցանել են գյուղի ամառանոցի հողերը և մտադիր են 1920 թ. ևս օգտվել դրանցից, ուստի և համաձայն չեն այդ հողերը գյուղացիներին բաժանել[3]։

Հողերը կուլակության ձեռքում կենտրոնացնելուն առավել նպաստեց 1920 թ. դաշնակների կողմից անցկացված, այսպես կոչված, «հողաբաժնությունը», որով կառավարությունը ուզում էր մի կողմից, «հողաբաժնության» անվան տակ խաբել գյուղի աշխատավոր մասսաներին, իսկ մյուս կողմից, փաստորեն ավելի ամրապնդել հողատերերի դիրքերը, որովհետև կալվածատիրական, եկեղեցապատկան և խոշոր մասնատիրական մյուս հողերը բաժանման ենթակա չէին. բաժանվում էին միայն համայնական հողերը[4]։

«Հողաբաժնությունը» թե իր ձևով և թե բովանդակությամբ կեղծ էր ու անհավասար։ Այն անցկացվում էր ոչ թե համաձայն ամբողջ Հայաստանում եղած հողային ֆոնդի, այլ ըստ առանձին գյուղերի համայնքների հողերի։ Ուստի և տարբեր գյուղերում մեկ շնչին հասանելիր հողաբաժինը տարբեր էր։ Այն ժամանակ, երբ էջմիածնի գավառի Վերին Խաթունարխ գյուղում շնչաբաժինը հասնելու էր 30 լիտրի[5], նույն գավառի Գրամփա գյուղում այն պետք է հավասար լիներ 20-ի, Մուղանջուղում՝ 12-ի, Խզնաուզում՝ 8-ի, Աղավնատնում՝ 5 լիտրի[6] և այլն։ Այդ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև ամեն մի համայնքի օգտագործման տակ եղած հողաքանակը կախված չէր նրանում եղած բնակչության թվից։ Բայց «հողաբաժնությունն» անհավասար էր ոչ միայն առանձին համայնքները համեմատելիս, այլև հատկապես սոցիալական տարբեր խավերին հասնող բաժնի տեսակետից։ Իրականում Վ. Խաթունարխի աղքատ գյուղացին չստացավ 30 լիտր շնչաբաժին և ոչ էլ համագյուղացի կուլակը բավարարվեց դրանով։

Անցկացրած «հողաբաժնությունը» (իսկ այն անցկացվեց էջմիածնի, Ապարանի և Աշտարակի շրջանների մի շարք գյուղերում) ավելի վատթարացրեց չքավոր գյուղացիների վիճակը և ընդարձակեց գյուղական հարուստների հողերը։ 1920 թ. մայիսի 31-ին Ապարանի շրջանի Ղազնաֆար գյուղից բողոքում էին, որ «հողաբաժնությունից» հետո «վարելահողերը կրկին մնացել են ամբողջ գյուղի կուլակներին, իսկ գյուղի մեծ մասը կրկին զրկվել է կամ չնչին հողամասեր է ստացել, այն էլ հարուստների թողած վատ հողերից»[7]։ Կարբի գյուղից տեղեկացնում էին, թե հողաբաժն վերիլները (ի դեպ, ինչպես վկայում են գյուղացիների գրած բազմաթիվ համախոսականներ, վերիլները գրեթե բոլոր գյուղերում եղել են գյուղական զորքաներ կամ նրանց ազգականները) յուրացրել են գյուղի ամենաբերրի և պտղատու հողերը, իսկ «գյուղական խաղաղ և աղքատ դասակարգը զրկվեց պետական հողերից»[8]։ Փարաքարցիները 1920 թ. հունիսի 14-ին իրենց համախոսականում հայտնում էին, որ հողաբաժնությունը ոչ միայն օգուտ չի տվել, այլ ավելի է վատթարացրել իրենց դրությունը, որովհետև լավագույն հողերը գյուղացիներից կտրել և տվել են հարուստներին և կուլակներին[9]։ Կարելի է բերել գյուղացիների կողմից գրված բազմաթիվ այլ բողոքի համախոսականներ, որոնք ցույց են տալիս, որ այդ «հողաբաժնությունը» բխել է դաշնակցական կառավարության հակագյուղացիական ագրարային քաղաքականությունից, հանդիսանալով նրա անբաժանելի մասը։

1919 թ. հունիսին, պառլամենտի «ընտրությունների» նախօրյակին, դաշնակները դիմում են գյուղացիական մասսաներին խաբելու հայտնի մեթոդին։ Նրանք վերակենդանացնում են Անդրկովկասյան Սեյմի կողմից 1918 թ. մարտի 7-ին ընդունված հողային օրենքը։ Սակայն

---

[1] «Արարատյան աշխատավոր», 1919, № 9։

[2] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 214, գ. 5 բ, թ. 237, 238 և 240։

[3] Նույն տեղում, ֆ. 203, դ. 313, թ. 110։

[4] Նույն տեղում, ֆ. 214, գ. 5 բ, թ. 579։

[5] 1 լիտրը հավասար է 227 քառ. մտ.։

[6] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 214, գ. 34, թ. 12։

[7] Նույն տեղում, ֆ. 214, դ. 34, թ. 12։

[8] Նույն տեղում, թ. 539։

[9] Նույն տեղում, թ. 113—114։

այս օրենքը ևս չէր վերացնում հողի մասնավոր սեփականությունը, իսկ «բռնագրավվելիք» հողերը հանձնելու էր «հողային կոմիտեներին», ուր նստած էին հարուստների պաշտպաններն ու ներկայացուցիչները։ «Օրենքը» հողատերերին թողնում էր բավականին մեծ չափի հողեր՝ մինչև 40 դեսյատին։ Սեյմում ընդունած օրենքի նման սա ևս հողային կոմիտեներին լիազորում էր «կալվածատերերին թողնվելիք հողվածում որոշ հողարաժինների չափը բարձրացնել տեղային պայմաններին համաձայն»։

Իրականում դաշնակցական կառավարությունը գործնական ոչ մի քայլ չարեց նույնիսկ այդ «օրենքի» իրականացման ուղղությամբ, իսկ հողային կոմիտեներում նստած դաշնակ «ռեֆորմատորների» գլխավոր զբաղմունքը եղան չարաշահությունները։ Էջմիածնի գավառի հողային կոմիտեի գործունեության մասին դաշնակցական մինիստրներից մեկը, օրինակ, գրում էր. «Էջմիածնի գավառի հողային կոմիտեն, որ պիտի գրավեր ազնվականության հողերը, անմխիթար դրության մեջ է. ունեցել է մեկ նիստ, այն էլ գրամական ավանսներ ստանալու մասին։ Էջմիածնի գավառում կան 32 կալվածքներ, ոչ մեկը չի գրավված։ ...Կոմիտեի նախագահ Հովսեփ Հարությունյանը, որը միաժամանակ պետական գույքերի վարչության ներկայացուցիչն է, վանեկափայտի ապօրինի գրավում է կատարում և ապա փրկանք ստանալով ազատվում»[1]։ Այսպես կոչված հողային կոմիտեների ձևական գոյության և Հայաստանում գոյություն ունեցող հողազրկության մասին ստիպված էր խոստովանել նույնիսկ դաշնակցական կառավարության պարագլուխ Հ. Օհանջանյանը 1920 թ. հունիսի 4-ին պառլամենտի նիստում արած իր տխրահռչակ հայտարարությամբ. «Ընդհանուր դժգոհության (Մայիսյան ապստամբության— Վ. Մ.) պատճառներից մեկը,— ասաց նա,— կարելի է համարել նաև հողազրկությունը։ Թեպետ մենք ունենք հողային կոմիտեներ, բայց նրանց գործունեությունը որևէ արդյունք չի տվել»[2]։

Հենց նույն օրը Հ. Օհանջանյանի կառավարությունը ընդունում է օրենք «Հողային հատուկ մարմինների մասին», որոնք պետք է փոխարինեին նախկին հողային կոմիտեներին։ Մայիսյան շարժումների ճնշման տակ ընդունված այս օրենքը, չնայած հողերի «պետականացման» մասին նրանում պարունակվող խոստումներին, լրիվ ուժի մեջ էր թողնում Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի և դաշնակցական պառլամենտի ընդունած բոլոր հողային օրենքները և դրանով էլ հենց, ըստ էության, պահպանում գոյություն ունեցող հողային հարաբերությունները։ «Իրենց գործունեության ընթացքում հողային հատուկ մարմինները ղեկավարվելու են Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի ու Հայաստանի խորհրդարանի և պառլամենտի հրատարակված օրենքներով»[3]։

***

Դաշնակցական կառավարությունը գյուղում դարկ տվեց կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։ Կապալով էր տրվում այսպես կոչված պետական հողային ֆոնդը, որ կազմվել էր ադրբեջանական գյուղերի «մարդման» և հայ գյուղական համայնքների հողերի կրճատման հաշվին։ Կապալատուն ինքը դաշնակցական պետությունն էր, իսկ կապալառուները՝ կուլակներն ու տնտեսապես զորեղ գյուղացիները, որոնք հնարավորություն ունեին վճարել կապալադինը և մշակել վարձակալած հողերը։ Սակավահող, հողազուրկ, արտադրության միջոցներից և գործիքներից համարյա զրկված գյուղացին, որը չէր կարող մշակել նույնիսկ իր փոքրիկ հողակտորը, պարզ է, որ ի վիճակի չէր հողեր վարձակալելու։ Արխիվային բոլոր փաստաթղթերը համոզեցուցիչ կերպով ապացուցում են այդ։ Դաշնակցական կառավարության տվյալներով 1920 թվականի օգոստոսին Էջմիածնի շրջանում յուրաքանչյուր կապալառուի վարձակալած հողը ամենապակասը հավասար էր 70 դեսյատինի[4]։ Պարզ է, որ նույնիսկ միջակ գյուղացին չէր կարող նախ այդքան հողի կապալագինը վճարել, և երկրորդ, որն առավել կարևոր է, այդ հողամասը մշակել։ Բայց պարզ է նաև այն, որ այդքան հողեր մշակելու համար կապալառուն պետք է դիմեր կողմնակի ուժի օգտագործման, այսինքն աշխատավոր գյուղացիներին վարձակալելու և նրանց շահագործելու մեթոդին։

Զգալի չափով հողեր էին վարձակալել Աշտարակի, Էջմիածնի, Ալեքսանդրոպոլի և այլ

---

[1] «Հառաջ», 1920, № 5։

[2] «Ժողովուրդ», 1920, № 92։

[3] Նույն տեղում։

[4] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 199, գ. 181, թ. 29։

շրջանների կուլակներն ու հարուստները։ Այսպես, մի քանի կուլակների կապալով էին արվել էջմիածնի գավառի Իգդալու, Մոլլա-Բագալ, Քյարիմարիս գյուղերի հողերը[1]։ Ահագին հողեր վարձակալել էին Երևանի գավառի Ճատղան գյուղի կուլակները[2]։ Նույն գավառի Նովո-Նիկոլաևկա գյուղի կուլակները 1919 թ. գարնանը վարձակալել էին 808 դեսյատին հողամաս[3]։

Կուլակների կողքին կապայառուներ էին երբեք կապալագին չավող խմբապետներն ու մաուզերիստները, գաշնակցական պարագլուխներից կազմված գյուղատնտեսական կեղծ ընկերությունները։ Վերջիններս, որպես կանոն, կազմված էին լինում պառլամենտի անդամներից, մինիստրներից, գյուղի և երկրագործության հետ ընդհանուր ոչինչ չունեցող գաշնակցական պաշտոնյաներից։ Դրանք բուրժուական ձեռնարկություններ էին, որոնք իրենց ճանկը գցելով հսկայական վարելահողեր և այգիներ, գյուղացիությանը շահագործելու ճանապարհով գարձել էին գաշնակցական պաշտոնյաների եկամտի աղբյուրներից մեկը։ Նշված ընկերություններից էին «Մուրճ», «Մաճկալը», «Տնտեսությունը», «Կուլտուրական կայոնիան» և ուրիշներ։ Միայն «Տնտեսությունը» իր ընդամենը ութ անդամներով 1920 թ. գարնանը տիրանում է ադրբեջանական Արարբերու գյուղի հողերին՝ տարածությամբ 640 դեսյատին[4]։ «Կուլտուրական կայոնիա» ընկերությունը, որի մեջ էին մտնում գաշնակ պարագլուխներ Կ. Սասունին, Վ. Նավասարդյանը, Ս. Գրիգորյանը և ուրիշներ, Արշակ Ղազարյանի գլխավորությամբ, տիրացել էր Ջարբախի և հարևան մյուս գյուղերի հողերին։ Բողոքելով նրանց դեմ, Սուրմալուի Ալի-Գրգլ գյուղից փախած գաղթականները գրում էին, որ գոյություն ունեցող մյուս ընկերությունների նման սա ևս մի խմբակցություն է, որին մասնակցում են երկրի օրենսդրական մարմնի մի քանի անդամներ, որպիսին է հանրապետության պառլամենտը, որը միշտ էլ հայտարարել է «հողը աղքատ ժողովրդին», սակայն այդ օրենսդրական մարմնի անդամներն այսօր խլում են հողը աշխատավոր ժողովրդից»[5]։

Գյուղացիության վրին ծանր լուծ էր գաշնակների հարկային բռնաբարությունը։ Գաշնակցական կառավարությունը ոչ միայն պահպանեց նախկին հարկային սիստեմը, այլև այն հարստացրեց բազմաթիվ նոր հարկերով։ Գյուղացիության կողմից վճարվող հարկերն էին բահրային տուրքը, հողային զեմստվոյական հարկը, ռազմական հարկը, հատուկ հողային տուրքը և այլ հարկեր[6]։ «Լոռվա գյուղացիության ձայն» թերթը «Մեր տուրքերի սիստեմը» վերնագրով հոդվածում նշում էր հարկերի ավելի քան 14 տեսակներ։ Դրանք էին. օղարաշի, միանվագ տուրք շնչի համար, վարելահողի տուրք, խոտհարքի տուրք, գաղափուլի, փայտի փող և այլն[7]։

Միմիայն հողերից գանձվող հարկը, համաձայն գաշնակցական կառավարության 1920 թ. հուլիսին ընդունած օրենքի, հավասար էր բերքի 16 տոկոսին։ Բայց հողի դիմաց գյուղացին պարտավոր էր վճարել նաև հարկ այսպես կոչված ինքնավարություններին։ Այդ հարկը նույնպես կազմում էր բերքի պատկառելի մասը։ էջմիածնի գավառում, օրինակ, գավառական ինքնավարությանը գյուղացիների կողմից վճարվող հողային տուրքը հավասար էր բերքի 10 տոկոսին[8]։

Հարկերն ամբողջությամբ ծանրացած էին գյուղացիական չքավոր ու միջակ անտեսությունների վրա։ «Այսօր աղքատը շատ ավելի է խարջ տալիս, քան երեկ և հարուստը շատ ավելի քիչ, քան տալիս էր երեկ»,— գրում էր «Լոռվա գյուղացիության ձայն» թերթը[9]։

Գյուղացիության վիճակն ավելի էր ծանրանում գաշնակ հարկահանների կամայականությունների և կաշառակերության պատճառով։ Գաշնակցական թերթուկ «Զանգն» անգամ չի կարողանում թաքցնել, որ հարկահանները «լինելով գյուղի ազրուկներից ու ագդեցիկներից... գյուղից հավաքում են ավելի շատ ցորեն, քան նշանակված է, սրանից-նրանից կաշառք են ստանում»[10]։

---

[1] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 214, գ. 5ա, թ. 293։
[2] Նույն տեղում, թ. 203, գ. 317, թ. 2։
[3] Նույն տեղում, թ. 4։
[4] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 203, գ. 317², թ. 84։
[5] Նույն տեղում, թ. 78։
[6] Նույն տեղում, թ. 13։
[7] «Լոռվա գյուղացիության ձայն», 1920, N 2։
[8] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 214, գ. 19, թ. 12։
[9] «Լոռվա գյուղացիության ձայն», 1920, N 1։
[10] «Զանգ», 1919, N 34։

Գյուղացիության գլխին շարիք էին պարհակները, որ նրանք պարտավոր էին կատարել անձամբ կամ քաշող ուժով։ Բոլորովին ձրի կամ համարյա ձրի գյուղացին պարհակի էր բշվում դաշնակցական պետության, զորքի, պաշտոնյաների մոտ։ Նրան դաշնակները կտրում էին աշխատանքներից՝ ներառյալ գարնանացանն ու բերքահավաքը և ստիպում իրենց օգտին աշխատել։ Այդ պատճառով շատ տեղերում հաճախ կանգ էր առնում գարնանացանը, արևի ու անձրևների տակ փչանում էր բերքը։ 1920 թ. հոկտեմբերին Էջմիածնից հայտնում էին, որ պարհակ գնացած 100 սայլից ոչ մեկը չի վերադարձել, «դաշտային աշխատանքները կանգնել են, անվերջ պահանջներ ենք ստանում, որ հնարավորություն չկա կատարելու»[1]։

Դաշնակների հարկային քաղաքականությունը չէր սահմանափակվում, սակայն, նշված հարկերով ու պարհակներով։ Իրականում դաշնակցության ավերը հայկական գյուղում ավելի ուժեղ չափով արտահայտվեց կառավարական բռնագրավումների ու կողոպուտի միջոցով։ Գյուղացուն կողոպտում էին դաշնակցական կառավարությունը, նրա վերին և ստորին պաշտոնյաները, կալվածատերերն ու կուլակները։ Բռնագրավման ենթակա էր ամեն ինչ սկսած տներից վերջացրած հացահատիկով։ Բռնագրավումները ոչ թե պատահական, այլ անընդհատ, պետության կողմից սահմանված միջոցառումներ էին։ 1918—1920 թթ. դաշնակցական կառավարությունը Հայաստանում անցկացրեց տների, անասունների, հացի, բրնձի և մի շարք այլ բռնագրավումներ։ Հաճախ բռնագրավվում էր գյուղացու վերջին կովը, ոչխարը կամ քաշող անասունը։ «Շատ հաճախ խլում էին այնպիսի մարդկանց ձիերը, որոնք զրկվում են ապրուստի միակ միջոցներից»[2]։

Բռնագրավումները ուղեկցվում էին աշխատավոր գյուղացիության նկատմամբ զինված ուժի գործադրումով, ծեծով ու ջարդով։ Զինված ջոկատների օգնությամբ դաշնակները ահաբեկման էին ենթարկում գյուղացիներին, նրանց ստիպելով կատարել իրենց պահանջները։ 1918 թ. նոյեմբերին Եղվարդից գրում էին, որ «հացահատիկների ստիպողական գրավման համար մեր գյուղն է եկել լիազոր Կարապետ Այվազյանի տրամադրության տակ մի զորախումբ պուլեմյոտներով, որոնք և ղեկավարում են գյուղացիների տները խուզարկելը։ Խուզարկությունները կատարվում են առանց գյուղացիական ներկայացուցչի մասնակցության, գրավածի համար ստորագրություն չեն տալիս, գրավում են ինչ իրենց դուր է գալիս— յուղ, թխած հաց... գրավում են աչք տեսած ցորենի ամբողջ պաշարը. երեկ Արամ Մուրադխանյանի տնից տարան ունեցած բոլոր ցորենը. Մուրադխանյանի ընտանիքը բաղկացած է 18 հոգուց, նրանք երեկ ամբողջ օրն ու այսօր սոսկալի հեծկլտանք են բարձրացրել, սովամահ չլինելու պատճառով երկուսը դանակով ինքնասպանության փորձ են անում, բայց շուտով հասնում են և թույլ չեն տալիս»[3]։

Սուրմալուից, Ղուրդուղուլից, Ալեքսանդրոպոլի գավառի գյուղերից և այլ վայրերից գյուղացիները անընդհատ բողոքում էին, որ իրենցից բռնի ուժով գրավել են ցորենի վերջին պաշարները, չթողնելով ոչինչ ընտանիքների համար։ «Պարենավորման լիազորի կարգադրությամբ,— գրում էին, օրինակ, Ճատղռանից,— պատժիչ խմբի միջոցով խլվեց գյուղացիներից մոտ 60 խալվար ցորեն և այսօր ժողովուրդը մոտ երկու հարյուր տուն տառապում են սովից»[4]։

Պատկերն ավելի է վատանում մանավանդ 1920 թ., երբ մայիսի 24-ին դաշնակները օրենք են ընդունում ազգաբնակչությունից հացի պաշարները բռնագրավելու մասին։ Այդ օրենքի համաձայն նա, ում մոտ օրենքի հրատարակումից երկու շաբաթ հետո կգտնվեր հացի և այլուրի «ավելցուկ», ենթարկվելու էր երեք ամսվա բանտարկության և 100 հազար ռուբլի տուգանքի։ Առանձին արտոնություն էր տրվում նրանց, ովքեր կառավարությանը կտեղեկացնեին ուրիշների թաքցրած հացի մասին. այդպիսիները ստանալու էին հայտնաբերված հացի կամ ալյուրի արժեքի մեկ քառորդը[5]։

Պետական բռնագրավումներին զուգընթաց աշխատավորներին թալանում էին պաշտոնյաները։ Գործակցելով բարձր պաշտոնյաների հետ և նրանց հովանավորությամբ, յուրաքանչյուր շրջանային կամ գյուղական պաշտոնյա բռնության ու ծեծի միջոցով կողոպտում էր աշխատավոր գյուղացուն, տեռորի ենթարկում դիմադրողներին։ Այդպիսի պաշտոնյաներին պատժելու մասին խոսելը ավելորդ է։ Ընդհակառակը, ով շատ էր հափշտակում, նրա պաշտոնը ավելի

---

[1] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 214, գ. 51, թ. 192։

[2] Նույն տեղում, ֆ. 199, գ. 27, թ. 86։

[3] «Մշակ», 1918, № 199։

[4] «Զանգ», 1919, № 8։

[5] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 214, գ. 20, թ. 23։

էր բարձրանում։ Բազմաթիվ դեպքերում անպատիժ էին մնում նույնիսկ մարդասպան պաշտոնյաները։ Ըստ դաշնակցական պառլամենտի անդամներից մեկի 1919 թ. օգոստոսի 8-ին արած հայտարարության, Աշտարակի գավառամասային կոմիսարը սպանել էր 11 հոգի և մնացել անպատիժ[1]։ Նույն թվականի սեպտեմբերին Նոր Բայազետի գավառի Շահրիզ, Ծաղկունք և Դղմաշեն գյուղերի բնակիչները բողոքում էին, որ իրենց գյուղերում կատարյալ անարխիա է տիրում՝ գավառամասի կոմիսար Գարեգին Թաիրյանի պատճառով։ «Այդ Գարեգինը կանոնավոր մաուզերիստ է,— հայտնում էին նրանք։— Ամեն գյուղից վերցնում է ձրի կերպով երեքական արաբա խոտ։ Միլիցիոներներն անարգել կերպով թալանում են գյուղերը, գյուղերը շրջում ամբողջ կոմանդով և նրանց համար պետք է պատրաստ լինի ձրի ամեն ինչ խեղճ գյուղացուց։

Ո՞ւր փախչի գյուղացին։ Միլիցիոներին յուղի փոխարեն պանիր տվիր, բանդ վերչացավ, կամ արաբադ պետք է դնա պագվոդ, եթե այդ չունես, վրայիդ շալվարը կագյոնի է և այլն։

Նաև 23-ին օգոստոսի Գարեգինը Շահրիզ գյուղի իրան նոր նշանակած կոմիսարի հետ, որը, իրեն պես ավազակի մեկն է՝ Հարութ Վարդանյանի հետ թալանեց ճանապարհ գնացող թուրքերից 23 եզ և կով և ահագին ոչխարներ միասին, հինգ արաբա խալիչաներ և պղնձե ամաններ, տեղաշորեր։

Թալանելուց հետո 24 կին և երեխաներ գիշերով կոտորեցին»[2]։

1920 թ. փետրվարին Ալեքսանդրապոլի մի խումբ բնակիչներ քաղաքի հասարակության անունից հայտնում էին, որ պաշտոնյա Վալադյանը իր զինված մարդկանցով, տաջիկների օրինակով, երեք ամիս է ինչ ծեծում ու ճնշում է ժողովրդին, թալանում և մեծ չափերի գաշառներ է ընդունում։

Դաշնակների տիրապետության շրջանում բացակայում էր անձի և գույքի անձեռնմխելիությունը։ Ամենուրեք վխտում էին ավազակների ու մարդասպանների, գողերի բանդաները։ Քրեական հանցագործությունները, որ այդքան մեծ չափեր էին ընդունել, իրենց արմատները գտնում էին դաշնակցական կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ, հանդիսանում էին տիրապետող կարգերի անխուսափելի պտուղը։ Զինված հրոսախմբերը, օրը ցերեկով, հարձակվում էին անզեն ու անօգնական բնակիչների վրա, հափշտակում նրանց գույքն ու ունեցվածքը, իսկ հեշտ հարստանալու շահամոլությամբ բռնկված դաշնակ պաշտոնեությունը, հակահարված տալու փոխարեն, հաճախ գործակցում էր գողերի ու ավազակների հետ և օգտվում գողության ավարից։ Գողոնից բաժին էին ստանում գավառապետները, գյուղական կոմիսարները, ոստիկանները։ 1919 թ. նոյեմբերին Մեծ Ղարաքիլիսայում գավառական կոմիսարի հովանավորությամբ գողերի խումբը զբաղվում է կողոպտելով բնակչությանը, բայց ոչ գողերն են պատժվում և ոչ էլ գավառական կոմիսարը։ Դիլիջանի գավառապետ Մեսրոպ Բեգի մասին գրում էին, որ նա «ավազակ մարդկանց պաշտոններ է տալիս, որ շրջանի անիշխանությունը արդյունք է հենց Մեսրոպ Բեգի բռնած ընթացքի։ Այսպես, նա շրջանային կոմիսար է նշանակել Նիկոլ Ղուլիջանյան անունով հայտնի մեկ ավազակի, որի դեմ բողոքում են բոլոր գյուղացիները։

Մեսրոպ Բեգի եղբայր Արամ Բեգը դեկտեմբերի 6-ին կազմում է 25 հոգուց մի ավազակախումբ և Քեսալար գյուղից թալանելով 73 գլուխ տավար՝ տանում է Ջալալ-օղլու շրջանը ծախելու»[3]։

Լինում էին դեպքեր, երբ ավազակային հարձակումների հետևանքով գյուղը զրկվում էր իր կովերի նախիրից կամ ոչխարների հոտից։ Դարալագյազի Արփա գյուղից հայտնում էին, որ գողերը քշել-տարել են գյուղի 500 գլուխ ոչխարից բաղկացած հոտը[4]։ Նոր Բայազետից բողոքում էին, թե 300 հոգուց բաղկացած գողերի զինված խումբը 1919 թ. հոկտեմբերի 17-ին հարձակվել է Վալի-Աղալու գյուղի տավարի և ոչխարի հոտի վրա, սպանել է հովիվներին և տարել բոլոր ոչխարներն ու տավարը[5]։ Նույն անապահով վիճակն էր տիրում Հայաստանի մյուս շրջաններում։

---

[1] «Հայաստանի աշխատավոր», 1919, № 118։

[2] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 201, գ. 1588, թ. 73—74։

[3] «Հառաջ», 1920, № 23։

[4] Նույն տեղում, 1919, № 12։

[5] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 201, գ. 1585, թ. 87։

***

Թուրքական օկուպացիայի և դաշնակների հակաաշխատավորական քաղաքականության հետևանքով բայքայվեց Հայաստանի բնակչության ապրուստի հիմնական միջոցը՝ գյուղատնտեսությունը։ Իր հիմնական ճյուղերով՝ թե դաշտավարությամբ, թե այգեգործությամբ և թե անասնապահությամբ գյուղատնտեսությունը լիովին քայքայում ապրեց։ Համեմատած նախապատերազմյան՝ 1913 թվականի հետ, ավելի քան 3/4-ով կրճատվեցին բոլոր կուլտուրաների ցանքատարածությունները։ Եթե 1913 թվականին Հայաստանի ամբողջ ցանքսը հավասար էր 345,7 հազար հեկտարի, ապա 1919 թվականին այն կազմում էր ընդամենը 82,7 հազ. հեկտար, այսինքն՝ 1913 թ. 23,9 տոկոսը [1]։ Նախապատերազմյանի համեմատությամբ 4 անգամ կրճատվել էին հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները [2]։ Դրությունը ավելի վատ էր տեխնիկական և բանջարաբոստանային կուլտուրաների ցանքսերի հետ։ Եթե 1913 թ. ցանվել էր 15,3 հազ. հեկտար բամբակ, ապա 1919 թ. ցանվել էր 0,6 հազ. հա., իսկ 12,3 հազ. հեկտար բանջարաբոստանային կուլտուրաների և կարտոֆիլի ցանքսի փոխարեն՝ 2,5 հազ. հեկտար [3]։

Անկում ապրեց նաև այգեգործությունը։ 1913 թվականին Հայաստանում հաշվվում էր 9200 հեկտար խաղողի այգի, այնինչ 1919 թվականին մնացել էր 5100 հեկտար, այսինքն ոչնչացել էր 4100 հեկտար այգի [4]։

1918—1920 թթ. ավելի վատթարացավ Հայաստանի գյուղատնտեսության նյութատեխնիկական վիճակը։ Մի կողմից թուրքերի ավերածությունները ու թալանը, իսկ մյուս կողմից դաշնակների հակաժողովրդական գործելակերպը մեծ չափերով ոչնչացրին երկրի արտադրական միջոցները, այդ թվում նաև գյուղատնտեսական գործիքները։ Վերանորոգման բացակայությունը իսպառ շարքից հանեց գյուղատնտեսական գործիքների ճնշող մեծամասնությունը։ Հողի մշակման հիմնական միջոցը՝ նախնաղարյան արորն ու գութանը, 1914 թ. համեմատությամբ, պակասեցին— առաջինը՝ 77,7 տոկոսով, իսկ երկրորդը՝ 70 տոկոսով [5]։

Ողբերգական էր անասնապահության վիճակը։ Բավական է նշել, որ 1914 թ. բոլոր տեսակի անասունների 2.364.733 ընդհանուր գլխաքանակից 1919 թ. մնացել էր ընդամենը 747.643 գլուխ, այսինքն պակասել էր 68,4 տոկոսով [6]։

***

Գյուղատնտեսության՝ ապրուստի այդ հիմնական միջոցի քայքայումը, որը հետևանք էր թուրքական օկուպացիայի և դաշնակների հակաժողովրդական տիրապետության, առաջ բերեց համընդհանուր աննկարագրելի մի սով, որն ընդգրկել էր Հայաստանի բոլոր շրջանները։ Ավելի վատթար էր դրությունը թուրքական սարսափներից մազապուրծ դարձած հայ գաղթականության հետ, որը անօթևան ու անտեր սփռվել էր Հայաստանով մեկ։ Սովին ուղեկցել էին տիֆը, խոլերան և համաճարակային այլ հիվանդություններ, որոնց տարածմանը նպաստում էր բժշկա-սանիտարական ամենատարրական պայմանների բացակայությունը։ Սարսափելի չափեր էր ընդունել, մանավանդ, բծավոր տիֆը, որը 1918 թ. վերջերին և 1919 թ. սկզբներին մոլեգնում է Երևանի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Իջևանի և Գիլիջանի շրջաններում։ Անգամ դաշնակցական «Հառաջը» չէր կարող թաքցնել, որ «բծավոր տիֆը մոռացնել է տվել մյուս բոլոր հիվանդությունները։ Նա միացած սովի հետ, ուղղակի հնձում է ժողովրդին։ Տներ կան, որ ընտանիքի բոլոր անդամները անխտիր պառկած են։

Այսպես է դրությունը ամբողջ Հայաստանում, և քաղաքներում, և գյուղերում...» [7]։ Հա-

---

[1] «Соц. строительство Арм.ССР» (1920—1940), Ереван, 1940, էջ 64, աղյուսակ 60։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 74, աղյուսակ 75։

[4] Նույն տեղում։

[5] «Վիճակագրական տեղեկատու», Երևան, 1925, էջ 56—57։

[6] Նույն տեղում, աղյուսակ № 5։

[7] «Հառաջ», 1919 (Թիֆլիս), № 17։

մաճարակի հետևանքով շատ գյուղերում «այնքան շատ ժողովուրդ է մահանում, որ նույնիսկ չեն հասցնում թաղել»[1]։

Հայ ժողովուրդը կոտորվում էր բառի ամենալայն իմաստով։ Համատարած սովը շատ շրջաններում քաղել էր բնակչության մեծամասնությունը. Այստեղ ավելի հարմար է խոսել հենց իրենց՝ փաստերի լեզվով։ «Շրջանի բնակչության 65 տոկոսը մեռել է,— 1919 թ. փետրվարի 19-ին գրում էին Սարդարապատից,— իսկ մնացած չնչին տոկոսը դժվար թե մի քանի օրվա կյանք ունենա, կմախք են դարձած բառիս բուն իմաստով՝ չեն կարողանում շարժվել։ Նույնիսկ խոսել։ Մեռելները շարաթներով մնում են տան մեջ և ենթարկվում են շների պատառոտման։ Հաճախ ամբողջ ընտանիքն է մեռնում և հայտնի չի լինում։ Շատերն էլ ուժ չունենալով մերձավորի վին հեռու տանելու՝ ձգում են կամ ցրհորները և կամ պահում են բամբակի մեջ։ Գեղրու գյուղի գերեզմանատանը ձգված էր 18 դի, որից 8-ը պատառոտել էին շները»[2]։ Աշտարակից տեղեկացնում էին, որ շրջանի 16 գյուղերում սովի հետևանքով մնացել է բնակչության ընդամենը 1/4-ը[3]։

Սովորական երևույթ էր դարձել ստոկած կենդանիներով սնվելն ու դաշտերում արածելը։ «Եթե ասենք՝ դաշտերում և անտառներում այլևս կանաչ չմնաց լինի պետքական թե անպետք՝ հավատացեք,— գրում էին Մեծ Ղարաքիլիսայից շրջանի վիճակի մասին։— Մի կողմից գաղթականությունը, մյուս կողմից բնիկները օրնիբուն սարերն ընկած՝ թույլ, ուժասպառ, կժգույն ու անձայն խոտ են քաղում, աղցան անում և ուտում»[4]։ Նույնն էին հաղորդում Ապարանից. «Ապարանի շրջանում ազգաբնակչությունը դաշտերում փռված արածում է, ուռչում ու մեռնում։ Շատերը փախչում են գավառից, անթաղ թողնելով դիակները դաշտերում և մեծ ճանապարհների վրա[5]։ Սովի ծանր հարվածներին ենթարկվեցին Թալինի շրջանի բոլոր 8 գյուղերը, որոնց 11.247 բնակչից սովի ու հիվանդությունների պատճառով 1919 թ. մնացել էր 5307 հոգի, այսինքն ոչնչացել էր բնակչության 52,8 տոկոսը[6]։ Սուրմալուի գավառը 1918 թ. փետրվարից մինչև 1919 թ. մայիսը, այսինքն 15 ամսվա ընթացքում, իր 13.950 բնակչից կորցրել էր 7.950-ը[7], այսինքն 57 տոկոսից ավելին։ Վաղարշապատում 1918 թ. առաջին չորս ամիսներին հավաքվել էր 1866 անտեր մեռել[8]։

Եվ հիրավի, անհնարին է առանց սոսկումի կարդալ 1917—1918 թվականների հայկական մամուլը, որը լեփ-լեցուն է Հայաստանում այն ժամանակ տիրող մղձավանջի նկարագրությամբ։ Սահմռկեցուցիչ են բոլոր այն նյութերը, որոնք պատմում են սովի ու համաճարակի աղետավոր գործողությունների մասին։ Դարերի խորքից եկող, հազարամյա կուլտուրայի տեր հայ ժողովուրդը կատարյալ կործանման էր ենթարկվում։ Օտար դահիճը 1915 թվականին ընաջնջել էր նրա արևմտյան հատվածը, իսկ 1918 թվականին ասպատակել նրա արևելյան հատվածում, հասցնելով մարդկային ու նյութական հսկայական վնասներ։ Բայց դարնակ «կառավարողները» Հայաստանն անջատելով ռևոլյուցիոն Ռուսաստանից, ժողովրդին պատճառում էին նորանոր արհավիրքներ։ Այս ամենը ծայրահեղորեն խորացնում էր երկրի տնտեսական քայքայումը, հասցնելով այն կատարյալ փլուզման։ Դրությունը ավելի սրվեց 1920 թվականի աշնանը, երբ Թուրքիայի հետ տեղի ունեցող պատերազմը նոր աղետների ազբյուր դարձավ։ Եվ հայ ժողովրդի համար ճակատագրական այդ պահին միակ փրկարար ուժը Սովետական իշխանությունն էր, որի հաղթանակն էլ հենց նրան բերեց ոչ միայն ֆիզիկական ապահով գոյություն, այլև՝ ազգային վերածնունդ, սոցիալ-տնտեսական բարգավաճման լայն հնարավորություններ։

---

[1] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 199, գ. 42, թ. 3։
[2] Նույն տեղում, ֆ. 205, գ. 338, թ. 187։
[3] Նույն տեղում, թ. 264։
[4] Նույն տեղում, ֆ. 203, գ. 686, թ. 25—28։
[5] «Կայծ», 1919, № 38։
[6] «Արարատյան աշխատավոր», 1919, № 10։
[7] «Կայծ», 1919, № 51։
[8] «Հայաստանի աշխատավոր», 1919, № 1։

ЗЕМЕЛЬНЫЙ ВОПРОС И ПОЛОЖЕНИЕ КРЕСТЬЯНСТВА АРМЕНИИ В 1917—1920 ГОДАХ

В. А. МИКАЕЛЯН

(Р е з ю м е)

В 1917—1920 гг. аграрный, т. е. земельный, вопрос в Закавказье, в том числе и в Армении, продолжал оставаться нерешенным. В статье, основываясь на изучении земельных законов и положений, принятых Особым Закавказским Комитетом, Закавказским Комиссариатом и Сеймом, равно и националистическим правительством дашнаков, автор приходит к заключению, что за время своего существования все эти органы власти фактически сохраняли помещичье землевладение, способствовали укреплению позиций деревенской буржуазии и рьяно выступали против аграрно-крестьянских движений, подавляя последние как огнем и мечом, так и политикой обмана масс, в особенности путем лживых обещаний.

Характеризуя аграрно-крестьянскую политику дашнакского правительства как политику защиты интересов помещиков и деревенских богачей, автор в связи с этим разоблачает антинародную сущность проведенных дашнаками в 1918—1920 гг. в армянской деревне мероприятий, как-то: так называемый «раздел» земли, создание сельскохозяйственных ложных товариществ, земельные законы, налоговую политику, различные конфискации, проведенные с целью захвата у крестьян продуктов, скота и др.

Особое внимание уделено освещению положения крестьянских масс Армении в изучаемый период. Показаны полная деградация сельского хозяйства и разорение крестьянства, его крайне тяжелое состояние, виновниками которого были как дашнакское правительство, которое своей антисоветской политикой поставило страну на грань пропасти, так и турецкие оккупанты, бесчинствовавшие в Армении и ограбившие ее население.